Հայկական գիտահետազոտական հանգույց
Armenian Research & Academic Repository

Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonComercial 3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով

ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

Պ. ԳՐԻԲՈՎ

ԲԱՏՐԱԿԻ ՀՈՒՇԱՏԵՍՏԸ

ԱՇԽՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թարգմանեց Հ. Հարությունյան

ՀՐԱՏ. ԳՈՍՊԼՏՆՏԵՍ ՄԹՈՒՓ. ԿԵՆՏՎԵՐՉ

ԵՐԵՎԱՆ 1929

Պ. ԳՐԻԲՈՎ

321.914.2
Գ-

ԲԱՏՐԱԿԻ ՀՈՒՇԱՏԵՏՐԸ

ԱՇԽՊԱՏՍԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ

Թարգմանեց Հ. Հարությունյան

ՀԱՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԳՐԱԴԱՐԱՆ № 2
ԱԿԱԴԵՄԻԱ

ԵՐԵՎԱՆ

1929

Ա 3791

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԵՐԵՍ

Ի՞նչ ոգուտ է տալիս այս գրքույկը . . . 5
Բատրակը, բատրակուհին և հովիվը ինչպե՞ս
անեն, վոր լավ պայմաններով աշխա-
տանքի վարձվեն 6
Ինչպե՞ս անել, վոր վարձողը ճշտորեն կա-
տարի աշխ-պայմանագրի կետերը . . . 16
Ավելի մոտ արիմիություանը 16
Թյուղբանկում, պատրաստ ես, արդյոք աշ-
խատանքի պայմանագրերի կամպանիայի
համար 17

ՀԱՅԿՈՒԼԻԴՐԱՆՔԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Պատվեր № 2581. Դրատեսվ. 1808 թ. Տիրաժ 4000

Բատրակնե՛ր, բատրակուհիներ և հովիվներ, գյուղացկոմների աշխատավորնե՛ր, ուշադիր կերպով մինչև վերջը կարդացեք այս հուշատետրը, թե չե՝ դուք չեք իմանա այն ամենը, ինչ վոր պետք է անել աշխ-պայմանագրերի կամպանիայի ժամանակ:

Ի՞ՆՉ ՈԳՈՒՏՆԵՐ Ե ՏԱԼԻՍ ԱՅՍ ԳԻՐՔԸ

Զմեռ է: Շատ հեռու չէ և գարունը: Արդեն ժամանակն է, վոր բատրակը, բատրակուհին և հովիվը մտածեն, թե վորտեղ ու ինչ պայմաններով պիտի վարձվեն ամառային աշխատանքների շրջանում: Ժամանակն է, վոր գյուղբանկոմը ել մտածի, թե ինչ ձևով պիտի պատրաստվի աշխատանքի պայմանագրերի կամպանիայի համար, վոր ավելի լավ լինի:

Կբացվի գարունը, արևը կսկսի տաքացնել և բատրակներն ու հովիվները գյուղերը կընկնեն աշխատանք գտնելու: Նրանք կշրջեն գյուղերը և՛ խմբերով, և՛ առանձին-առանձին: Ամեն մեկը մտածում է, վոր շուտ գործ գտնի, վարձվի ու անցնի աշխատանքի: Այստեղից ել առաջ է գալիս այն յերևույթը, վոր բատրակներն ու հովիվները վարձողի հետ պայմանավորվելիս շտապում են և շատ անգամ ել մրցում են իրար դեմ: Այսպիսի պայմաններում շատ ու շատ սխալներ

են կատարվում, որի համար էլ հետո շատ են տուգանում: Իսկ այդ սխալները մեծ մասամբ առաջ են գալիս անկազմակերպ լինելուց և խորհրդային որենքներն ու վարձու աշխատանքի մասին յեղած կանոնները չիմանալուց: Այդ սխալներից խուսափելու համար, պետք է հրաժարվել անկազմակերպ ձևով վարձվելուց և միշտ վարձվել արհմիության աջակցությամբ: Հենց դրա համար էլ արհմիությունը կազմակերպված է, որպեսզի նրա միջոցով բատրակները ու հովիվները կարողանան իրենց շահերը պաշտպանել և իրենց իրավունքները պահանջել վարձողներից:

Գյուղատնտեսական ու անասնային բանվորների արհմիությունը, մանավանդ նրա ստորին մարմինները—գյուղբանկոմները—միշտ պատրաստ պիտի լինեն, որպեսզի բատրակին, բատրակուհուն և հովվին ոգնեն աշխատանք գտնել, համաձայնության գան վարձողի հետ, պայմանների մասին և աշխատանքի պայմանագիր կնքել: Բատրակների, բատրակուհիների և հովիվների շահերը պաշտպանելու համար արհմիությունը պատրաստ պիտի լինի, մանավանդ գարնանը, աշ-

խատանքային պայմանագրերի կամպանիայի ընթացքում, յերբ մեծ թվով բատրակներ ու հովիվներ են վարձվում ամառվա աշխատանքների համար: Աշխատանքային պայմանագրերի կնքման կամպանիան սկսվելիս գյուղբանկոմի առաջ շատ մեծ խնդիր և դրվում: Գյուղբանկոմների մեջ աշխատող ընկերների առաջ շատ ու շատ հարցեր են դրվում, վորոնք նրանք պետք է լավ հասկանան և վորոնց պետք և անմիջապես պատասխան տան:

Այս գրքույկի նպատակն էլ հենց այդ է—մի կողմից ոգնել բատրակ-բատրակուհիներին և հովիվներին, մյուս կողմից՝ ոգնել գյուղբանկոմների աշխատավորներին ու գյուղլիազորներին,—վորպեսզի նրանք պարզ կերպով հասկանան այն բոլոր խնդիրները, վորոնք առաջանում են աշխատանքի վարձվելիս և աշխատանքի պայմանագիր կնքելիս:

Այս գրքույկի մեջ ասված է, թե ինչպես լավ պայմաններով վարձվել և ինչպես ավելի լավ է աշխատանքի պայմանագիր կնքել վարձողի հետ: Այն ամենը, ինչ վոր ասված է այս գրքույկի մեջ, նորություն չէ, բայց կարևոր ու անհրաժեշտ է այդ բոլորն իմանալ, աշխատանո-

քային պայմանագրերի կնքման կոմպոնենտային պատրաստ լինելու համար:

Գրքույկը գրված է հուշատետրի ձևով: Այս հուշատետրն առաջնորդ պիտի լինի ինչպես բատրակների, բատրակուհիների և հովիվների համար, այնպես էլ գյուղբանկոմների աշխատավորների ու գյուղլիազորների համար, աշխատանքի վարձվելու և աշխ-պայմանագիր կնքելու ժամանակ:

ԲԱՏՐԱԿԸ, ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆ ՑԵՎ ՀՈՎԻՎԸ ԻՆՉՊԵՍ ԱՆԻՆ, ՎՈՐ ԼԱՎ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԱՐՁՎԵՆ

Վարպետի բատրակը, բատրակուհին ու հովիվը կարողանան գործ գտնել և լավ պայմաններով վարձվել, պետք է հիշեն, որ վարձվելուց առաջ հարկավոր է տեղեկանալ գյուղբանկոմում, թե ինչ պայմաններ պիտի առաջարկել վարձողին:

Եթե բոլոր բատրակները, բատրակուհիներն ու հովիվներն իրար հետ կապվեն մի հոգու նման, ամուր կանգնեն միության պահանջների վրա և չհամաձայնվեն ավելի վատ պայմաններով վարձվել, այդ դեպքում նրանք կհասնեն իրենց ուզածին և աշխատանքի կվարձվեն լավ

պայմաններով: Ով, վոր արհմիության առաջադրած պայմաններից հետ կկանգնի, նա կվնասի և՛ իրեն, և՛ ուրիշներին: Վարձվելու ժամանակ բատրակների ու հովիվների անկազմակերպ լինելը ձեռնտու է միայն վարձողներին: Դրա համար էլ նրանք ամեն կերպ աշխատում են արգելք լինել, խանգարել բատրակների ու հովիվների կազմակերպվելուն:

Յեթե ձեր ապրած տեղը աշխատանք չկա և դուք չգիտեք, թե վորտեղ վարձվեք, հարցրեք գյուղբանկոմին կամ արհմիության շրջկոմին և նրանք կասեն, թե վորտեղ աշխատանք կա, ինչ պայմաններով և ինչպես կարելի է գնալ այնտեղ: Յեթե ձեր ապրած տեղը, կամ մոտերքը աշխատանքի բորսա, կամ թե աշխատանքի հաշվառման կայան կա, ապա պետք է դիմել այնտեղ և իմանալ, թե վորտեղ աշխատավորի կարիք կա:

Յեթե աշխատանքի բորսան կամ աշխատանքի հաշվառման կայանը ձեզ ուղարկում են աշխատանքի կամ աշխատանք վերցնելու յեն ուղարկում այնպիսի տեղ, ուր յերկաթուղի կա, վորտեղ յերկաթուղով պիտի գնալ, պահանջեցեք նրանցից յերկաթուղու արտոնյալ տալոն: *Այդ մասին*

Գյուղանոցաս Մխիթյան Կենտրոնական Կոմիտեն միջնորդել է և մտցված է յերկաթուղու № 87 արտոնյալ տարիֆը, վորով համբորդելիս ռուբլուն 35 կոպեկ պակաս են վճարում, քան թե սովորական տարիֆով համբորդողն է վճարում:

Վարձողի հետ համաձայնության յինկեր անպայման արիմիության ներկայացուցչի մասնակցությամբ: Նա կոգնի ձեզ ավելի լավ պայմաններով վարձվել և վարձողի հետ գրավոր աշխատանքային պայմանագիր կկնքի:

Վարձողի հետ համաձայնության գալիս և աշխատանքի պայմանագիր կնքելիս՝ գյուղբանկոմը պարտավոր է զգնել վոչ միայն միության անդամներին, այլ և բոլոր բատրակներին, բատրակուհիներին և հովիվներին:

Աշխատանքի պայմանագիր կնքեցեք միմիայն արիմիության միջոցով: Արհմիության ներկայացուցիչը գիտե բատրակի ու հովվի աշխատանքի մասին յեղած որենքները և ամեն բան կնախատեսի, վորպեսզի վարձողը չկարողանա հրաժարվել կատարելու այն բոլոր պարտավորությունները, վոր նա իր վրա յե վերցրել աշխատանքի պայմանագրով:

Մի՛ համաձայնվի աշխատել առանց գրավոր աշխատանքի պայմանագրի: *Որենքը պարտավորեցնում է բոլոր վարձողներին, լինի նա կուլակ, աշխատավոր գյուղացիական տնտեսություն, թե հատրակություն, գրավոր աշխատանքի պայմանագիր կնքել վարձվող բատրակի, բատրակուհու, հովվի կամ թե արհմիության հետ: Գրավոր աշխատանքի պայմանագիր չկնքելու համար վարձողը պատասխանատվության է ենթարկվում: Չնայած դրան, հաճախ վարձողները համոզում են բատրակներին, հովիվներին և գրավոր աշխատանքի պայմանագիր չեն կնքում: Նրանք այդպես են անում, իհարկե, իրենց ոգուտի համար. դրանով նրանք բատրակին և հովվին զինաթափ են անում, վորպեսզի վեճ ծագած դեպքում և դատարան դիմելիս բատրակը ձեռքին փաստաթուղթ չունենա: Նրանք լավ գիտեն, վոր առանց գրավոր պայմանագրի բատրակի ու հովվի համար դժվար է ապացուցել իրենց պահանջների արդար լինելը:*

Աշխատանքի պայմանագրի մեջ մանրամասն գրեցեք այն բոլոր պայմանները, վորոնցով դուք համաձայնություն եք յե-

կել վարձողի հետ: *Դա անհրաժեշտ է անել նրա համար, որպեսզի հետո, հաշիվները փակելու ժամանակ վարձողի հետ վեճեր չառաջանան: Հաճախ վարձողները հրաժարվում են այն բոլորից, ինչ որ գրված չէ պայմանագրում:*

Հովիվներ և հովվի ոգնականներ, պահանջեցեք հասարակական լիազորներ ընտրել աշխատանքի պայմանագիր կնքելու համար: Հրաժարվեցեք ժողովում առևտուր անելու ձևով վարձվելուց: Մի՛ք համաձայնվի «մաղարիչ» տալ: Պայքարեցեք հերթով սրա-նրա տանը կերակրվելու և քնելու ձևի դեմ: Պահանջեցեք, որ մի տեղ տրվի և ուտելիքը և քնելու տեղը: Պայքարեցեք «փոդրաթի» ձևով հովվություն անելու դեմ:

Մի՛ք մոռանա, որ աշխատանքի պայմանագրով նախատեսված պայմանները չեն կարող վատացնել բատրակի, բատրակուհու և հովվի դրությունը համեմատած յեղած որենքների հետ: Ցերեկ աշխատանքի պայմանագրում այնպիսի պայմաններ լինեն գրված, որոնք համեմատած որենքի հետ վատացնում են վարձողի դրությունը, ապա բատրակների ու հովիվների աշխատանքի որենքների հա-

մածայն այդպիսի պայմանագրերը համարվում են չեղյալ, ուժը կորցրած: Այդպիսի դեպքերում վարձողը պարտավոր է կատարել այն, ինչ վոր սահմանված է որենքով: Որինակ՝ յեթե պայմանագրում աշխատավարձը պետական մինիմումից*) ցած է նշանակված, ապա վարձողը պարտավոր է վարձվողին վճարել տվյալ տեղի համար որենքով սահմանված նորմայից վոչ պակաս:

Վարձելիս և աշխատանքի պայմանագիր կնքելիս պետք է հիշել, վոր և որենքները և միությանն պահանջները բոլոր վարձողների նկատմամբ էլ նույնը չե:

Կուլակային տնտեսությունները պարտավոր են կատարել Աշխատանքի Որենսգիրքը և Ռ.Ս.Հ. Միության Կենտգործկոմի ու ԺողԿոմխորհի վորոշումները՝ Աշխատանքի Որենսգիրքը կուլակային

---

*) Պետական մինիմումը աշխատավարձի այն չափն է, վոր սահմանում է Աշխատանքի Ժողովրդական Կոմիսարիատը: Պետական մինիմումը վորոշվում է նրա համար, վորպեսզի վարձողները չկարողանա այդ չափից էլ պակաս վճարել:

տնտեսություններում կիրառելու կարգի մասին։

Ոժանդակ վարձու աշխատանք ոչտարգործող աշխատավորական գյուղացիական տնտեսություններում գործում են «ժամանակավոր կանոնները»։ Համեմատած կուլակային տնտեսությունների հետ՝ աշխատավորական տնտեսություններին այդ կանոններով մի շարք արտոնություններ են տրվում։

Հասարակական հողերի աշխատանքի մասին ել կա հատուկ վորոշում, վոր հրատարակվել է «ժամանակավոր կանոնների»-ի հիման վրա։

Արիմիությունը կուլակային տնտեսություններից ավելի մեծ պահանջներ է անում, քան թե գյուղացիական տնտեսություններից և քան թե հասարակական հողերը վարձելու ժամանակ։ Վորքան վարձողի տնտեսությունը հարուստ է, վորքան աշխատանքի պայմանները ծանր են և ուժեղ է վարձու բանվորների շահագործումը, այնքան ավելի մեծ պահանջներ է անում արհմիությունը։

Ահա հենց դրա համար ել ամեն անգամ վարձվելիս պիտի խորհրդակցել գյուղբանկոմի հետ, վորը պաշտպանում է

աշխատանքը գյուղացիական տնտեսություններում և գիտե որենքներն ու միության պահանջները:

Ցերբ վարձվում եմ այնպիսի կուլակային տնտեսության մեջ, վորտեղ սովորաբար մի քանի բատրակ են աշխատում, տեղեկացեմ, թե արդյոք արիմիությունը այդ տնտեսության հետ հավասական պայմանագիր չե՞ կնքել: Դա անհրաժեշտ է իմանալ, վորովհետև, յեթե այդպիսի պայմանագիր կա, կուլակն իրավունք չունի բատրակ-բատրակուհիներ վարձել ավելի վատ պայմաններով, քան թե այն պայմանները, վոր նախատեսված են հավաքական պայմանագրով: Արհմիության հետ այդպիսի հավաքական պայմանագիր կնքած տնտեսության մեջ վարձվելիս առանձին գրավոր պայմանագիր կնքելն ավելորդ է, բայց կուլակը պետք է ձեզ տա հաշվեգրքույկ կամ հաշվեթերթ: Այդ հաշվեգրքույկում կամ հաշվեթերթում ոչիտի գրված լինի վարձելու բոլոր մանները և պիտի նշանակված լինի խաստավարձի ու մյուս վճարումների մանակը, ինչպես վոր պայմանները վարձվելիս:

Պահանջեցեք, վոր վարձ

սաձմի պայմանագիրը տոմարագրի գյուղխորհրդում և ձեզ տա պատճենն ու հաշվեթերթը:

Եթե աշխատանքի պայմանագիրը արհմիության միջոցով է կնքված, նրա պատճենը պահանջեցեք գյուղբանկոմից:

ԻՆՉՊԵՍ ԱՆԵԼ, ՎՈՐ ՎԱՐՁՈՂԸ ԿԱՏԱՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԵՏԵՐԸ

Եթե վարձողը իր պարտականությունները չի կատարում այնպես, ինչպես պայմանագրումն է գրված, հարկավոր է այդ մասին հայտնել գյուղբանկոմին կամ աշխատանքի տեսչին: Միությունը միշտ էլ կարող է ստիպել վարձողին, որ կատարի իր պարտականությունները: Իսկ եթե վարձողը միությանն էլ չլսի, այդ դեպքում միությունը այդ վեճը լուծելու համար կդիմի կամ գնահատող-կոնֆլիկտային հանձնաժողովին և կամ ժողովուրդին:

ԱՎԵԼԻ ՄՈՏ ԱՐՀՄԻՈՒԹՅԱՆԸ

Աշխատանքի վարձվելը, լավ աշխատանքային պայմանագիր կնքելը և վարձողին ստիպելը, որ պայմանագրում նշանակված իր բոլոր պարտականությունները կատարի,-

այս ամենը այնքան էլ հեշտ գործ չէ, մանավանդ, յեթե բատրակը մենակ է և իրեն հեռու յե պահում արհմիությունից: Վա՛յ են բատրակին, վոր կընկնի կուլակի սուր ճանկերի մեջ: Հիմա քիչ կան այդպիսի հիմարներ, վորոնք կընկնեն կուլակի թակարդը: Բայց և այնպես, բոլորն էլ խելքի չեն յեկել: Դեռ կան բատրակ-բատրակուհիներ, վորոնք հավատում են կուլակի փչած ստերին և մինչև սրտները չվառվի, չեն հասկանա, վոր բատրակն ու հոլիվը կուլակի հետ մի ճանապարհով գնալ չեն կարող, այլ պետք է գնան իրենց արհմիության հետ, ամբողջ աշխատավորության հետ միասին:

Ընկեր բատրակներ, բատրակուհիներ ու հոլիվներ, համախմբվեցեք, վորքան կարելի յե ավելի մոտեցեք իրար ու ձեր արհմիությանը:

Միացած ուժերով և արհմիության ղեկավարությամբ միայն կարելի յե լավացնել ձեր դրությունը:

ԳՑՈՒՂԲԱՆԿՈՄ, ՊԱՏՐԱՍՏ ԵՍ ԱՐԴՅՈՔ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԿԱՄՊԱՆԻԱՅԻ ՀԱՄԱՐ

Արդյոք ունե՞ս աշխատանքի պայմանագրի թերթեր (բլանկներ): Յեթե չու-

ՀԱՅ ԱՌՅՈՒՆԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ № 2 ԾԱՂԿԱԴԶՈՐ
A 3791
15735

նես, անմիջապես պահանջիր արհեստի-թյան շրջկոմից։ Հիշի՛ր, վոր կուլակային տնտեսություններին համար աշխ-պայմանագրերի առանձին թերթ կա, վորը հաստատված է Աշխատանքի Ռեենդրքին։

Ոժանդակ վարձու աշխատանք գործադրող աշխատավորական դյուղացիական տնտեսություններնի հետ աշխատանքի պայմանագրեր պիտի կնքել այն թերթերի վրա, վորոնք կազմված են «ժամանակավոր կանոնների» հիման վրա։ Հասարակական հովիվների համար ել առանձին տեսակի թերթ գոյություն ունի։ Զըմռռանաս վերցնել նաև հավաքական պայմանագրերի թերթեր այն կուլակային տնտեսությունների համար, վորոնք 5–10 ավելի բանվորներ են վարձում։

Արդյոք միութենական բարձր մարմիններից դու ցուցմունքներ ունե՞ս, թե ինչպիսի պատասխաններ պիտի տեսնել աշխատանքի պայմանագրերի կնքման կամպանիայի համար, ինչպես կնքել աշխ-պայմանագրերն ու հավաքական պայմանագրերը, ինչպիսի պահանջներ առաջադրել վարձողներին։ Եթե այդ ցուցմունքները չունես, չտաք կարգով պահանջիր միությունից։ Մանրամասն

հրահանգներ պահանջիր աշխատանքի պայմանագրերի կնքման կամպանիայի մասին: Ձեռք բեր «Բատրակի աշխատանքային պայմանագիրը» գրքից*): Այդ գրքի մեջ մանրամասն բացատրած է, թե ինչպես պիտի աշխատանքի պայմանագրերը կնքել բատրակների, բատրակուհիների և հովիվների համար:

Արդյոք դու բացատրական աշխատանք ե՞ս տարել բատրակների, բատրակուհիների և հովիվների մեջ: Պետք է վարձվելուց առաջ բատրակների ու հովիվների ժողովներ հրավիրել: Այդ ժողովներում պիտի քննել, թե միությունն ինչ պահանջներ պիտի անի վարձողներից: Պիտի պայմանավորվել, որ վարձողի հետ համաձայնության գալու ժամանակ համախմբված ու պինդ պիտի կանգնեն

---

*) Պ. Գրիբովի «Բատրակի աշխատանքային պայմանագիր» գիրքը հայերեն թարգմանություն. տպագրել է Հայ Պետհրատը 1929 թվին, Երևանում: Այդ գիրքը բաղկացած է 78 էջերից և արժե 15 կոպեկ: Վաճառվում է գրախանութներում: Կարելի է ստանալ նաև միութենական մարմիններից:

այդ պահանջների վրա: Պետք է բացատրել Խորհրդային Իշխանության հրատարակած որենքները բատրակների և հովիվների աշխատանքի մասին:

Արդյոք գի՞տես, թե բատրակներից, բատրակուհիներից և հովիվներից վորն ավելի շատ կարիք է զգում աշխատանք ստանալու: Իր ժամանակին պիտի հոգտանել այդ տեղեկությունները հավաքելու մասին: Պետք է իմանալ, թե աշխատավոր ձեռքի ինչպիսի պահանջ կա վոչ միայն այն գյուղում, վորտեղ աշխատում է գյուղբանկոմը, այլ և ուրիշ տեղեր, մանավանդ, յեթե ձեր գյուղից բատրակներն և հովիվները ուրիշ տեղեր ել են գընում աշխատելու: Բանվորական ուժի պահանջի մասին տեղեկություններ կարելի յե ստանալ աշխատանքի բորսաներում կամ աշխատանքի հաշվառման կայաններում:

Արդյոք դու պարզե՞լ ես կուլակային տնտեսությունները: Կուլակային տնտեսություններն ու նրանց թիվը շատ լավ պիտի իմանալ, վորովհետև նրանց մեջ բատրակի (բատրակուհու) աշխատանքի պայմանները վորոշվում են Աշխատանքի Որենսգրքով և վոչ թե «ժամանակավոր

կանոններով»: Կուլակի նկատմամբ միության պահանջները եվ ավելի բարձր պիտի լինեն աշխատանքի պայմանագրով: Վոչ միայն գյուղբանկոմը պիտի իմանա և ճանաչի կուլակներին, այլ և նրանց մասին պիտի պատմել բատրակներին, բատրակուհիներին և հովիվներին: Հարկավոր է, վոր կուլակային տնտեսության մեջ վարձվելիս նրանք իմանան իրենց իրավունքները, գիտենան, թե իրենց աշխատանքի համար ինչ կարող են պահանջել կուլակից:

Արդյոք դու խոսել ե՞ս տեղական կազմակերպությունների հետ (*գյուղխորհուրդ, կուս. և ԼԿՅԵՄ բջիջներ, խրճիթընթերցարան և այլն*), վոր նրանք ոգնեն քեզ աշխատանքի պայմանագրերի կնքման կամպանիան անց կացնելիս: *Նրանք կարող են ոգնել բացատրական աշխատանքների ժամանակ, կուլակային տնտեսությունները պարզելիս և այլ խնդիրներում: Կոմյերիտականները պետք է ոգնեն գյուղբանկոմին աշխատանքի պայմանագրեր կնքելու գործում: Գյուղխորհուրդը պիտի տա կուլակային տնտեսությունների ցուցակը:*

Արդյոք գյուղխորհրդում կարգավոր-

վա՞ծ է աշխ-պայմանագրերը տոմարագրելու գործը: *Ոգնիր կանոնավորել այդ հարցը և պահանջիր, որ անպայմանորեն կարգով տոմարագրվեն բոլոր աշխատանքները:*

Արդյոք գյուղխորհուրդներում ու շրջգործկոմներում կախվա՞ծ են հետևյալ որենքները. «*Ժամանակավոր կանոններ*», «*Աշխատանքի Որենսգիրք*», *ԽՍՀՄ-ի Կենտգործկոմի և ԺողԿոմխորհի վորոշումը կուլակային տնտեսություններում Աշխատանքի Որենսգիրքը կիրառելու մասին: Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի վորոշումը հասարակական հովիվներ վարձելու կարգի և նրանց աշխատանքի պայմանների մասին: Բատրակների և հովիվների սոցիալական ապահովագրության որենքը:* Ցեր-է այդ բոլորը չկան, հետևիր, պահանջիր, վոր ձեռք բերվեն և կախվեն գյուղխորհուրդներում ու շրջգործկոմներում:

Գիտե՞ս արդյոք, թե ձեր տեղը բատրակների և հովիվների սոցիալական ապահովություն ա՞նց է կացվում, թե վոչ: *Եթե յեթե անց է կացվում, ապա ապրանձարկղը պատրաստություններ է տեսել, թե վոչ, արդյոք բատրաններին ու*

հովիվներին ծանոթացրե՞լ է, թե ինչ ձևով են տպահովագրվում, ինչ ձևով են նպաստ ստանում հիվանդության, հաշմանդամության, հղիության, ծննդաբերության և այլ դեպքերում: Ոգնիր ապգանձարկղին այդ բոլորը բատրակներին և հովիվներին բացատրելու գործում: *Հետևիր, որ այդ գործում ոգնեն նաև գյուղխորհուրդը, շրջգործկոմը, կոմսոմոլը, խրճիթ-ընթերցարանը, ուսուցիչները, բժիշկները, ժող-դատավորները, ագրոնոմները և գյուղի բոլոր հասարակական գործիչները:*

Արդյոք գյուղբանկումին կից կազմակերպվա՞ծ է աշխատանքի պաշտպանության հանձնաժողով: *Անպատճառ պիտի կազմակերպել այդպիսի հանձնաժողով և վորքան կարելի յե, ավելի շատ ակտիվ բատրակներ ու հովիվներ մասնակից անել նրա աշխատանքներին: Այդ հանձնաժողովը կոգնի քեզ աշխ-պայմանագրերը ինքդ լուն և մանավանդ ստուգելու, թե վարձուները վորքան ճիշտ են կատարում աշխ-պայմանագրի կետերը և աշխատանքի որենքները:*

Աշխատիր այդ հանձնաժողովի աշխատանքը կապել գյուղատնտեսական

աշխատանքի տեսչի հետ: *Հանձնաժողովը կոգնի նրան, իսկ տեսուչը կոգնի հանձնաժողովի աշխատանքները կարգավորելուն:*

Կարգավորվա՞ծ է արդյոք բատրակների, հովիվների և վարձողների միջև ծագած վեճերը գյուղխորհրդին կից հաշտարար (կոնֆլիկտային) հանձնաժողովների և ժողդատարանների միջոցով վրեժխնդրելու հարցը: *Խոսեցեք գյուղխորհուրդների և ժողդատարանի հետ, վոր շտապ կարգով քննվեն բատրակների պահանջների հարցերն իրենց վարձողներից:*

ԳՅՈՒՂԲԱՆԿՈՄՆԵ՛Ր, ԲԱՏՐԱԿՆԵ՛Ր, ԲԱՏՐԱԿՈՒՀԻՆԵ՛Ր ՅԵՎ ՀՈՎԻՎՆԵՐ

ՀԻՇԵՑԵՔ, վոր խոշոր ձեռնարկություններում (*արդյունաբերական բանջարանոցներում, ագրարակներում (պլանտացիա), վոչխարաբուծական արդյունաբերական տնտեսություններում և այլն*) տարածվում է միմիայն Աշխատանքի Որենսգիրքը լիովին:

ՀԻՇԵՑԵ՛Ք, վոր կուլակային տնտեսություններում ևս գործում է Աշխատանքի Որենսգիրքը, բայց վորոշ փոփոխություններով ու լրացումներով: *Թե*

կուլակային տնտեսություններում ինչպես և կիրառվում Աշխատանքի Որենսգիրքը, այդ մասին ասված և ԽՍՀՄ–ի Կենտգործկոմի ու Ժողկոմխորհի հատուկ վորոշման մեջ՝ «Աշխատանքի Որենսգիրքը կուլակային տնտեսություններում կիրառելու կարգի մասին»:

ՀԻՇԵՑԵ՛Ք, վոր գյուղացիական տընտեսություններում ոժանդակ վարձու աշխատանք կիրառելու մասին հրատարակված «ժամանակավոր Կանոնները» կարող են տարածվել միայն աշխատավորական գյուղացիական տնտեսությունների վրա, վորոնք բատրակ կամ բատրակուհի յեն վարձում կարիքի դեպքում և վոչ թե շահ ստանալու համար:

ՀԻՇԵՑԵ՛Ք, վոր Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի վորոշումը «Հասարակական հովիվներ վարձելու և նրանց աշխատանքի պայմանների մասին»—ընդհանուրի հոտն արածացնողներին է վերաբերում: Ցերթ հովիվ վարձում են առանձին նախրատերերը — կուլակները—այդ դեպքում հովվի աշխատանքի պայմանները վորոշվում են Աշխատանքի Որենսգրքով:

ՀԻՇԵՑԵ՛Ք, վոր բանվոր տրակտո-

բիտների, կաշագարների, տնայնագործական ձեռնարկությունների բանվորների աշխատանքի պայմանները վորոշվում են Աշխատանքի Որենսգրքով:

ՀԻՇԵՑԷ՛Ք, վոր գյուղական տնտեսություն (վար ու ցանք, բանջարանոց, անասուններ) չունեցող մարդու մոտ աշխատող տնային աշխատավորուհու վրա տարածվում է հատուկ որենք, վոր վերաբերում է տնային աշխատավորուհիներին:

ՀԻՇԵՑԷ՛Ք, վոր գյուղական տնայնագործների և արհեստավորների աշակերտների աշխատանքի պայմանները վորոշվում են առանձին որենքով, վոր վերաբերում է աշակերտների աշխատանքի պայմաններին:

ՀԻՇԵՑԷ՛Ք, վոր ձեռնարկություններն ու կուլակային տնտեսությունները պարտավոր են ապահովագրել իրենց վարձած բատրակներին, բատրակուհիներին ու հովիվներին, իսկ այն տեղերում, ուր *դեռ ապահովագրում չի անցկացվում, պարտավոր են բատրակի (բատրակուհու) հիվանդության դեպքում աշխատավարձ վճարել ամբողջ մեկ ու կես ամիս: Եթե բատրակուհին հղի է, նրանք պարտավոր են ազատել նրան աշխատանքից մի ամիս*

ծննդից առաջ և մի ամիս հետո, և այդ ժամանակի համար վճարել նրա աշխատավարձը: Եթե բատրակը (բատրակուհին) հաշմանդամ դարձավ, կամ հաշմանդամության հետևանքով մեռավ, պարտավոր են նրան, կամ նրա ընտանիքին վարձատրել այն թոշակի չափով, որ տրվում է ապահովագրվածներին՝ ապրանձարկղի կողմից:

ՀԻՇԵՑԵ՛Ք, որ հասարակական նովիվները ևս ապահովագրվում են պարտադիր կարգով:

ՀԻՇԵՑԵՔ, որ այն բատրակներն ու բատրակուհիները, որոնք աշխատում են այն գյուղացիական տնտեսություններում, որոնց վրա տարածվում են «ժամանակավոր կանոնները», ապահովագրվում են միայն կամավոր կերպով: Դրա *համար էլ այդպիսի տնտեսություն. հետ աշխատանքի պայմանագիր կնքելիս պետք է աշխատել նրան համոզել, որ ապահովագրի իր բատրակին (բատրակուհուն): Այդպես պիտի վարվել ամեն տեղ, որտեղ անց է կացվում բատրակների ու հովիվների սոցիալական ապահովագրություն:*

ԿՈՒԼԱԿԱՑԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԿՆՔԵԼԻՍ ՊԱՀԱՆՋԵՑԵՔ

Վոր աշխատավարձը ավելի բարձր լինի, քան մյուս գյուղացիական տնտեսություններում և ավելի պակաս չլինի, քան խորհրդային տնտեսություններում:

Վոր աշխատավարձի դրամական մասը պակաս չլինի բատրակի (բատրակուհու) ընդհանուր աշխատավարձի յերկու յերրորդից, հաշվելով նաև սննդի և ուրիշ բնականով տրվող վարձատրության արժեքը:

Վոր խստորեն կիրառվի ութ ժամյա բանվորական որը: Ցերկարացված բանվորական որ կարելի յե թույլ տալ միմիայն ամառը և այն ել վոչ ավելի 10 ժամից՝ չափահասի համար և վոչ ավելի 8 ժամից անչափահասի համար: Բանվորական որվա յերկարացման համար աշխատավարձը պիտի բարձրացվի, վոչ պակաս նորմալ բանվորական որվա աշխատավարձի մեկ յերրորդից:

Վոր անպայման շաբաթը մեկ անգամ մի հանգստի որ լինի և վոր վարձվողները աշխատանքից ազատվեն հեղափոխական տոներին և հատուկ հանգստի որերին:

Վոր հերթական արձակուրդ տրվի, այն հաշվով, վոր ամեն մի աշխատած ամսի համար ամենաքիչը մեկ որ արձակուրդ ընկնի:

Վոր անպայման բանվորական հագուստ և կոշիկ տրվի Աշխատանքի ժողովրդական Կոմիսարիատի սահմանած նորմաներով:

Վոր տրվի լավ բնակարան, սնունդ և քնելու հարմարություններ (մահճակալ, ներքնակ (դոշակ), քնելու տեղ):

Վոր առաջին հերթին վարձվեն միության անդամները:

ՈՃԱՆԴԱԿ ՎԱՐՁՈՒ ԱՇԽԱՏԱՆՔ ԿԻՐԱՌՈՂ ԳՅՈՒՂԱՑԻԱԿԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ԱՇԽԱՏԵՑԵՔ*)

Աշխատավարձը լինի ըստ տնտեսության կարողության, բայց վոչ պակաս արհմիության կողմից այդ տնտեսությունների համար սահմանված չափերից:

Վոր աշխատավարձի դրամական մասը պակաս չլինի ամբողջ աշխատավարձի կեսից, հաշված նաև սնունդը և բնականով տրվող ամբողջ վարձատրությունը:

Վոր ամառվա յերկարացված բանվո-

*) Այն գյուղացիական տնտեսութ., վորոնց վրա տարածվում են «Ժամանակավոր Կանոնները»:

բական որը ավելի չլինի 10 ժամից չափահասի համար և 8 ժամից անչափահասի համար:

Վոր շաբաթը մի անգամ հանգստի որ տրվի և վարձվողները աշխատանքից ազատվեն հեղափոխական տոներին և հատուկ հանգստի որերին: Եթե հանգստի որերին աշխատելն անհրաժեշտ է, դրա փոխարեն մի ուրիշ հանգստի որ պիտի տրվի, կամ թե այդ աշխատած որերի համար լրացուցիչ վարձ պիտի տրվի:

Վոր հերթական արձակուրդ տրվի՝ հաշվելով ամեն մի աշխատանքի ամսին մեկ որ:

Վոր լավ վորակի սնունդ, բնակարան և քնելու տեղ տրվի և բանվորական հագուստ ու վառնաման տրվի, կամ թե դրա փոխարեն վճարվի բատրակին (բատրակուհուն) իր սեփական հագուստը մաշելու դիմաց:

Վոր բատրակներն ու բատրակուհիները ապահովագրված լինեն:

ՀՈՎԻՎՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՇԽ-ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼԻՍ ՊԱՅՔԱՐԵՑԵՔ

Հովիվներին ու նրանց ոգնականներին լիովին աշխ-պայմանագրերով ընդգրկելու համար:

Հերթով սրա-նրա տանը կերակուր ստանալու և գիշերելու դեմ։

Հովվության ածուրդների (տորդերի) և հասարակության կամ նրա լիազորների ոգուին «մաղարիչ» տալու սովորության դեմ։

Հովվությունը կապալով (վոդրյաթով) վերցնելու և հովվի ոգնականներին շահագործելու դեմ։

Վարձելու ժամանակամիջոցը լրանալուց առաջ արձակելու դեմ։

Աշխատավարձը հասարակական լիազորների միջոցով վճարելու համար և վոչ պակաս քան սեզոնում 3 անգամ։

Հովիվներին ու նրանց ոգնականներին ազատ որ ունենալու համար։

Հովվին ու իր ոգնականին արձակուրդ տալու համար, աշխատանքի ամեն մի ամսին մեկ որվա հաշվով։

Աշխատավարձը բնականով վարձատրելուց դրամականին անցնելու համար։

ՊԱՑԿԱՐՆՑՆԵՐ

Անչափահասներին ու հղի բատրակուհիներին ծանր գործերում աշխատեցնելու համար։

Կուլակային տնտեսություններում 14

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
FL0038753

[064]

ዓተ ገ 5 ዓበ.

A I/3791